



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



# ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



## ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ(PACA)

ՃԱՄԲԱՐԱԿ ԵՎ ՎԱՀԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Այս հետազոտությունը ստեղծվել է  
Ամերիկայի ժողովրդի  
աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային  
գարգացման գործակալության  
/ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով:  
Հետազոտության  
բովանդակությունը միմիայն  
հեղինակներին է և պարտադիր չէ,  
որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ  
ԱՄՆ կառավարության  
տեսակետները:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՆՈՅԵՄԲԵՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ 2014

## Վերլուծություն իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ  
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

*Համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014թ-ի նոյեմբեր – դեկտեմբեր ամիսներին ԱՄՆ ՄՉԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:*

*Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.*

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, խմբի հավաքագրում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում, առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեզրեանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

## Բովանդակություն

Վերլուծություն իրականացնող կառույց .....	2
Համայնքներ .....	4
Համայնքերի տնտեսությունների մրցակցային առավելությունները .....	5
Անասնապահության վերլուծություն համայնքներում .....	6
Կաթի մթերում .....	8
Մսի մթերում և վաճառք .....	9
Պանրի և այլ կաթնամթերքների արտադրություն .....	9
Անասնապահության և մսի ու կաթի վերամշակման ոլորտներում բարելավման հնարավորություններ .....	11
Անասնապահության և հետագա վերամշակմանն ուղղված նախաձեռնություններ .....	13
Անասնապահություն .....	13
Կաթի և մսի վերամշակում .....	13
Հողագործությունը համայնքներում .....	14
Կարտոֆիլի մշակում .....	15
Հացահատիկի աճեցում .....	16
Այլ մշակաբույսերի աճեցում .....	16
Հողագործության զարգացմանն ուղղված նախաձեռնություններ .....	17
Տնտեսության այլ ճյուղեր .....	18

## Համայնքներ

Երբ երբեմնի զարգացած ու առաջատար անասնապահություն և հողագործություն ունեցող համայնքներում գյուղատնտեսությունը դառնում է գոյատևման միջոց, ապա այնտեղ ապրող երիտասարդը կորցնում է սերնդեսերունդ իրեն փոխանցված խորհուրդը, կապը հայրենի հողի հետ և իր բախտը փնտրում մեկ այլ ոլորտում, համայնքում, երկրում՝ փորձելով իր համար ստեղծել ապահովված և բարեկեցիկ կյանք: Իսկ այդ ընթացքում իր հայրենի գյուղում, իր պապերի կողմից մշակված հողը անտեր է մնում, տարեցտարի կոշտանում, ամրանում և մի երկու տասնյակ տարի հետո վերածվում խոտհարքի, հետո՝ արոտավայրի:

Այնտեղ՝ որտեղ ընդամենը երկու տասնյակ տարի առաջ ցորենի, գարու, կարտոֆիլի և այլ մշակաբույսերի ընդարձակ և բերրի դաշտեր էին, այժմ արածում են կովկասյան գորշ տեսակի անասունները, որոնց կաթն էլ հանդիսանում է բնակիչների մեծ մասի եկամտի հիմնական մասը:

Ճամբարակը և Վահանը այն համայնքներից են, որտեղ սակայն մարդիկ չեն հիասթափվել և այժմ փորձում են իրենց ուժերով կառուցել նոր, բարգավաճ և մրցունակ տնտեսություն: Աճում է անասունների թիվը, արդեն 20 տարի չվարված հողերը սկսում են նորից մշակվել, սկսում են օգտագործել հեռագնա արոտները և մտածում կաթնամթերքի արտադրության, մսամթերքի և այլ փոքր արտադրամասերի ստեղծման ուղղությամբ: Հետզհետե մեծանում են ֆերմաները, ավելանում են մշակվող հողատարածքները:

	Ճամբարակ	Վահան
Բնակչություն	6845	1202
Տնտեսություններ	1965	284
Վարելահողեր	1313	829
Արոտավայրեր	4737	1007
Վարելահող	2644	631
որից՝ ջրովի	-	-
Ցանվող կուլտուրաներ (հա)		97
Խոշոր եղջերավոր անասուններ	3520	1476
որից՝ կով	1863	690
Մանր եղջերավոր անասուններ	1649	1212
Կոմբայններ	-	1
Տրակտորներ	48	15
Բեռնատարներ	48	31

Համայնքները ունեն մեծ հնարավորություն անասնապահության և հողագործության զարգացման համար: Այս ոլորտները տեղական տնտեսության համար ռազմավարական նշանակությամբ ճյուղեր են, և տեղի բնակիչների մեծ մասը համայնքների տնտեսությունների զարգացումը տեսնում են այստեղ:

---

## Համայնքների տնտեսությունների մրցակցային առավելությունները

---

Համայնքների տնտեսությունների մրցակցային առավելություններն են.

Բնակլիմայական բարենպաստ պայմաններ անասնապահության զարգացման համար, խոտհարքերի և արոտավայրերի մեծ քանակություն:

Կաթմթերողների, ինչպես նաև «Աշտարակ կաթ» գործարանի մասնաճյուղի առկայությունը ճամբարակում:

Պանրագործության ավանդույթ և որակյալ մասնագետներ:

Գյուղատնտեսության մեջ հարուստ փորձ ունեցող մասնագետների առկայություն:

Աշխատասեր և փոփոխությունների միտված մարդիկ համայնքներում. համագործակցության հակվածություն և հասարակական ակտիվություն:

Գորգագործության ոլորտում որակյալ մասնագետներ:

---

## Անասնապահության վերլուծություն համայնքներում

---

Ավանդապես անասնապահությունը զարգացած է եղել այս համայնքներում: Տնտեսությունների գրեթե 90 % -ը զբաղվում է անասնապահությամբ: Հիմնականում զարգացած է խոշոր եղջերավոր անասնապահությունը, որին զուգահեռ պահում են նաև ոչխարներ և խոզեր: Ոչխարները հիմնականում չեն կթվում, կաթը կերակրում են գառներին, որոնց էլ վաճառում են: Ֆերմերները ոչխարաբուծության հիմնական զարգացումը մասամբ կապում են նաև բրդի իրացման հետ, որը այս պահին չի վաճառվում:

Խոզաբուծությունը ևս մեծ ծավալներ չունի համայնքներում, տնտեսությունները միջինը ունեն 1-2 խոզ, որը վաճառում են խոզի մսի մեծ պահանջարկ ունեցող ամիսներին:

Խոշոր եղջերավոր անասնապահությամբ զբաղվողներին կարելի է պայմանական բաժանել 4 խմբի.

**Խումբ 1. Տնտեսություններ, որոնք պահում են հիմնականում 1-2 անասուն՝ սեփական կարիքների բավարարման համար:**

Համայնքներում կա այսպիսի մոտ 1200 տնտեսություն: Հիմնականում տանը կից գոմային պայմաններում պահում են կովկասյան գորշ տեսակի անասուններ: Անասունները լրացուցիչ կերակրվում են տնամերձերից ստացված բույսերի մնացորդներով և ավելցուկով: Այս պայմաններում կովի միջին կաթնատվությունը տարեկան մոտ 1800 - 2000 լիտր է: Հասանելի են անասնաբուժական պրոֆիլակտիկ ծառայությունները:

**Խումբ 2. Տնտեսություններ, որոնք պահում են հիմնականում 3 -10 անասուն՝ սեփական կարիքների բավարարման և կաթի, մսի ու պանրի փոքր ծավալներով վաճառքի համար.**

Համայնքներում կա այսպիսի մոտ 800 տնտեսություն: Այս տնտեսություններում ևս գերակշռում է կովկասյան գորշ տեսակը: Ձմռան ամիսներին անասուններին պահում են հիմնականում տանը կից գոմերում, իսկ գարնան կեսից մինչև աշնան կես ընկած ժամանակահատվածում անասուններին ուղարկում են արոտ: Կաթը հանձնում են մթերոդներին, տնական պայմաններում պատրաստում են պանիր: Արտադրված միսը վաճառում են մսավաճառներին: Հասանելի են անասնաբուժական պրոֆիլակտիկ ծառայությունները:

**Խումբ 3. Միջին ֆերմերներ, որոնք պահում են 10 – 25 գլուխ անասուն.**

Համայնքներում կա մոտ 80 այսպիսի տնտեսություն: Անասունների քանակը թույլ է տալիս ստանալ համեմատաբար տեսանելի եկամուտ: Այս ֆերմաները կաթը հիմնականում հանձնում են մթերոդներին (160 դրամ +/- 10 դրամ գնով), միսը՝ մսավաճառներին: Պահքը էականորին չի տարբերվում վերը նշված երկու խմբերից: Կաթնատվությունը տարեկան միջինը կազմում է 1500 լիտր: Կաթնատվության ցուցանիշ անկումը, համեմատած ավելի քիչ քանակությամբ անասուններ ունեցողների հետ, պայմանավորված է լրացուցիչ կերակրման բարդությամբ: Չունենալով օժանդակ հողագործություն՝ ֆերմերները հնարավորություն չունեն կովերի լրացուցիչ կերակրում կատարել, ինչի արդյունքում նվազում է կաթնատվությունը:

**Խումբ 3. Խոշոր ֆերմերներ, որոնք պահում են 50 –ից ավելի գլուխ անասուն.**

Համայնքներում կա այսպիսի 9 ֆերմա: Անասնապահությունը այս ֆերմերների համար ապահովում է եկամտի հիմնական մասը: Ֆերմաները օգտվում են հեռագնա արոտներից, որոնք գտնվում են համայնքներից մոտ 15 կմ հեռավորության վրա: Հեռագնա արոտներում մասամբ հասանելի է խմելու ջուրը, չկա էլեկտրաէներգիա: Կթի ապարատների և այլ նպատակների համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի մինիմալ քանակը ստանում են հիմնականում բենզինով աշխատող էլեկտրաէներգիայի ազդեցությունների միջոցով, ինչի հետևանքով բավականին բարձրանում է էլեկտրաէներգիայի ստացման ինքնարժեքը:

Այս ֆերմերները հիմնականում ունեն սեփական գյուղտեխնիկա, ինչը թույլ է տալիս սեփական ուժերով կազմակերպելու անասնախոտի հավաքման աշխատանքները, փոքր ծավալներով կազմակերպելու հողի մշակում՝ լրացուցիչ անասնակերի ստացման համար: Ֆերմաների մի մասում բացի կովկասյան գորշ տեսակից պահում են նաև Շվից, Ջերսի, Հոլշտեյն տեսակի անասուններ: Կաթը հիմնականում հանձնում են մթերոդ



ձեռնարկություններին, ունեն պանրի արտադրության փոքր արտադրամասեր:

## Կաթի մթերում

Կաթը հիմնականում մթերվում է տեղի 4-5 միջնորդների կողմից, ովքեր կաթը հավաքում և հանձնում են ճամբարակում գործող «Աշտարակ կաթ» ձեռնարկության մասնաճյուղին, ինչպես նաև այլ մարզերում գործող կաթնամթերքի արտադրության խոշոր ձեռնարկություններին: Մթերողների հիմնական մասը կաթը մթերում է օրական երկու անգամ՝ թե հեռագնայից և թե տեղի ֆերմերներից: Կաթի մթերման միջին զինը 150 – 170 դրամ է: Մթերողները ունեն



լաբորատոր սարքավորումներ, կաթը մթերելիս կատարում են ստուգումներ: Բարձր յուղայնություն ունեցող կաթի համար ֆերմերները լրացուցիչ վճարվում են:

Վերջին ամիսներին «Աշտարակ կաթ» ձեռնարկությունը մի քանի

ամիս ուշացրեց մթերված կաթի դիմաց գումարների վճարումը, ինչը ազդակ հաղորդեց մթերողներին և խոշոր արտադրողներին պանրի արտադրության սեփական փոքր արտադրամասերի հիմնման համար: Համայնքներում այս պահին 5 -6 արտադրողներ աշխատում են այդ ուղղությամբ:





## Մսի մթերում և վաճառք

Մսի վաճառքը իրականացվում է մսավաճառների կողմից: Միս արտադրողները բողոքում են մսի մթերման գնից և իրենց հույսը կապում թարմ մսի արտահանման հնարավորությունների հետ: Ստորև ներկայացված են մսի մթերման գները:

Տավար	գնման գին 1կգ/ դրամ
Ցուլ	1900 – 2000
Կով	1400 – 1500
Ոչ առողջ և տարեց կենդանի	500 – 1200

Վահան գյուղում կա սպանդանոց , որը վերջին տարիներին գրեթե չի աշխատում:



## Պանրի և այլ կաթնամթերքների արտադրություն

Տարածաշրջանում անասնապահությամբ զբաղվող տնային տնտեսությունները ստացված կաթի 70%-ը վաճառում են, 10%-ը՝ սպառում սեփական տնային տնտեսության ներսում և հորթերի կերակրման համար, 20%-ը՝ վերամշակում տնային պայմաններում: Վերամշակման հիմնական տեսակը պանիրն է (90%)՝ չանախ տեսակի, յուղը (8%), այլ կաթնամթերքները (2%):

Պանիրը արտադրում են հիմնականում տնային պայմաններում ավանդական եղանակներով: Ճամբարակում գործում է պանրի արտադրամաս, որտեղ արտադրված պանիրը փաթեթավորվում է, պիտակավորվում և վաճառվում հիմնականում Երևանի խանութներում:



Ստորև ներկայացված է շահույթի հաշվարկը՝ 10 կով ունեցող տնտեսության համար կաթի իրացման և կաթից պանրի ստացման դեպքերում:

**Կաթի վաճառք**

1	Ստացվող կաթ, որից հորթերի կերակրում	1800լիտր x 10 = 18 000 լիտր 1400 լիտր
1.1	Կաթի վաճառքից ստացված եկամուտ	(18000 - 1400 ) x 160 = 2 656 000 դրամ
2	Հորթ	8 հատ
2.1	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
3	Ընդամենը՝ եկամուտ (1 + 2)	= 2 976 000 դրամ
4	Ծախսեր	= 880 000 դրամ <sup>1</sup>
5	Լրացուցիչ ծախսեր այլ կերերի համար	= 310 000 դրամ
6	Շահույթ	= 1 786000 դրամ

**Կաթից պանրի ստացում և իրացում**

1	Ստացվող կաթ, որից հորթերի կերակրում	1800լիտր x 10 = 18 000 լիտր 1400 լիտր
1.01	Պանրի ստացում	2370կգ
1.1	Պանրի վաճառքից ստացվող եկամուտ	2370 x 1500 = 3 555 000 դրամ
2	Հորթ	8 հատ
2.1	Հորթի վաճառք	40 000 դրամ x 8 = 320 000 դրամ
3	Ընդամենը՝ եկամուտ (1 + 2)	= 3 875 500դրամ
4	Ծախսեր	= 1 022 000 դրամ
5	Պանրի արտադրության	= 250 000 դրամ

<sup>1</sup> Հիմնական միջոցների ամորտիզացիան ներառված է ծախսերի մեջ

	լրացուցիչ ծախսեր (տնային պայմաններում արտադրություն)	
6	Շահույթ	= 2 603 500 դրամ

Պանրի արտադրությունը առավել շահավետ է, քան կաթի վաճառքը: Միևնույն ժամանակ պանրի մասնագիտացված արտադրություն իրականացնելու դեպքում հնարավոր է պանրի կիրառումը վաճառել 2000 դրամից բարձր գնով (աճելու են նաև ծախսերը, ներդրումը և սարքավորումների ամորտիզացիան՝ հաշվարկը կարվի անհրաժեշտության դեպքում, փոքր արտադրամասի բիզնես պլանի կազմման ժամանակ):

## Անասնապահության և մսի ու կաթի վերամշակման ոլորտներում բարելավման հնարավորություններ

Համայնքներում պահվող հիմնական տեսակը՝ կովկասյան գորշը, ունի միջինը 1700 լիտր կաթնատվություն: Այս տեսակի կաթնատվության բարձր ցուցանիշը 3000 լիտր է տարեկան: Կաթնատվության անկումը բացատրվում է հիմնականում լրացուցիչ կերերով անասունների չկերակրելու հանգամանքով, որի դեպքում հնարավոր չէ ապահովել անհրաժեշտ կերամիավոր լիակրթման համար<sup>2</sup>:

Ստորև ներկայացված է կերամիավորների պարունակությունը՝ ըստ հաճախ օգտագործվող կերատեսակների.

Տեսակ	1 կգ-ի հաշվարկով կերամիավորը
Խոտ առվույտի	0,52
Ծղոտ գարու	0,36
Քուսպ արևածաղկի	1,1
Եզիպտացորեն	1,1
Թեփ ցորենի	0,7
Թեփ գարու	0,7
Կարտոֆիլ	0,3

<sup>2</sup> Լիակրթման համար անհրաժեշտ է ապահովել օրական մոտ 10 կերամիավոր, այն դեպքում, երբ ձմռանը փաստացի ապահովվում է մինչև 5 կերամիավոր կեր:

Մեկ կովի հաշվով 10 կերամիավորը ապահովելու համար ֆերմերը պետք է կատարի օրական 400 դրամի ծախս (եթե ֆերմերն ինքն է զբաղվում հողագործությամբ) կամ 950 դրամի ծախս, եթե ձեռք է բերում շուկայից:

Հողագործության աստիճանական զարգացումը և մշակվող տարածքների ավելացումը մասամբ կլուծի այս հարցը. ֆերմերները կկարողանան գյուղում արտադրել անհրաժեշտ լրացուցիչ կերի մի մասը, ինչը թույլ կտա բարձրացնելու կաթնատվությունը:

Անասնապահության զարգացման երկրորդ էական հնարավորությունը արհեստական սերմնավորման եղանակով անասունների սորտավիճակումն է:

Շվից, Հոլշտեյն և Ջերսի տեսակները հնարավոր է ստանալ արհեստական սերմնավորման եղանակով՝ առանց ծնելիության հետ կապված խնդիրների:

Այս երեք տեսակների կաթնատվությունը հետևյալն է՝

- Շվից, Հոլշտեյն - 6000 - 8000 լիտր (յուղի պարունակությունը՝ 3.5)
- Ջերսի - 4 000 լիտր (յուղի պարունակությունը՝ 6.0)

4 սերնդավիճակություն է անհրաժեշտ հիմնական տոհմին շատ մոտ տեսակ ստանալու համար, որոնց կաթնատվության աճը ներկայացված է ստորև:

Սերունդ	Անվանում	ՄԱռավելագույն կաթնատվություն	Թույլատրվում է հեռագնա արտտավայրտանել
Առաջին	F1	3000	Այո
Երկրորդ	F2	4000	Այո
Երրորդ	F3	5000	Ոչ
Չորրորդ	F4	60000 - 8000	Ոչ

Համայնքներում հասանելի է արհեստական սերմնավորման ծառայությունը, սակայն ֆերմերները բողոքում են, որ հաճախ սերմնավորումը արդյունք չի տալիս, իսկ լրացուցիչ մատուցված ծառայությունը ևս վճարովի է:

Ճամբարակում Գյուղի և ագրոբիզնեսի զարգացման հիմնադրամի աջակցությամբ կառուցվում է անասնաբուժական և խորհրդատվական մասնագիտացված կենտրոն, ինչը դրական ազդեցություն կունենա ենթաշրջանում անասնապահության զարգացման վրա:

---

## Անասնապահությանը և հետագա վերամշակմանն ուղղված նախաձեռնություններ

---

### Անասնապահություն

- Աջակցում հեռագնա արոտների ճանապարհների բարեկարգման հարցում.
- Հեռագնա արոտներում էլեկտրաէներգիայի հասանելիության ապահովման աջակցություն.
- Խմոցների և անասունների խմելու ջրի ջրագծերի վերանորոգման աջակցություն.
- Արհեստական սերմնավորման վերաբերյալ իրազեկության բարձրացում, սերմնավորող անասնաբույժների վերապատրաստում.
- Լրացուցիչ կերերի արտադրության աջակցություն.
- Ֆերմերներին կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակային ֆինանսավորման աջակցություն:

### Կաթի և մսի վերամշակում

- Մսամթերքի և կաթնամթերքի արտադրության փոքր արտադրամասերի հիմնման աջակցություն՝ տեխնոլոգիական, տեխնիկական, որակի, փաթեթավորման, շուկայի առաջմղման և ֆինանսավորման ուղղություններով.
- Վահան գյուղի սպանդանոցի զարգացման ռազմավարության և շահագործման ծրագրերի կազմման աջակցություն:

---

## **Հողագործությունը համայնքներում**

---

20 տարվա հանգստից հետո հողագործությունը կրկին արթնանում է համայնքներում: Ավանդաբար այստեղ աճեցվել են հիմնականում կարտոֆիլ, հացահատիկ և անասնակեր: Դրանք այժմ էլ աճեցվող հիմնական մշակաբույսերն են: 3975 հեկտար վարելահողերից մշակվում է մոտ 9-% (մոտ 350 հեկտար): Հողերը մշակվում են հիմնականում փոքր տարածքներով:

Համայնքներում կա մոտ 25 հողագործ, ովքեր մշակում են 1 – 5 հեկտար տարածք, ևս 2000 տնտեսություն մշակում է միջինը 0.2 հեկտար հող: Այս տնտեսությունների մեծ մասը մշակում են իրենց տնամերձերը՝ աճեցնելով կարտոֆիլ, բանջարեղեն՝ սեփական օգտագործման համար:

Հողագործության զարգացմանը հիմնականում խոչընդոտում են հետևյալ գործոնները.

### **1. Անհրաժեշտ գյուղտեխնիկայի բացակայություն**

Գրեթե 20 տարի չմշակված հողերը կոշտացել են, և բնակչությանը հասանելի անիվավոր տրակտորները չեն կարողանում որակյալ վար կատարել այդ հողերում: Առաջ է գալիս թրթուրավոր տրակտորների անհրաժեշտությունը, որոնք հասանելի չեն հողագործներին: Կա այդպիսի 2 – 3 հին տրակտոր, որոնք հիմնականում մաշված են և վարի ընթացքում առաջացնում են լրացուցիչ բարդություններ:

Օգտագործվում են հնամաշ կոմբայններ, որոնք բերքահավաքի ընթացքում առաջացնում են մի շարք խնդիրներ՝

- բերքը ամբողջությամբ չեն հավաքում,
- բերքահավաքի ժամանակ հնարավոր է փչանան և չաշխատեն երկար ժամանակ,
- ծախսատար են,
- վնասում են հատիկները, ինչը խնդիր է առաջացնում ցանքսի ժամանակ:

### **2. Որակյալ սերմերի ձեռքբերման բարդություն**

Որակյալ և երաշխավորված սերմերի ձեռքբերումը բավականին դժվար գործընթաց է: Հողագործները հիմնականում չեն վստահում հասանելի սերմերի բերքատվությանը: Այս տարի Ճամբարակ համայնքում քաղաքապետարանի աջակցությամբ հասանելի են անվճար

հացահատիկի սերմեր, ինչը մեծ խթան է հանդիսացել հողագործության զարգացման համար: 50 – 60 հեկտարի չափով սպասվում է հողագործության ծավալների աճ:

### 3. Ֆինանսական միջոցների մատչելիություն

Գարնան և ընթացիկ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հողագործները հաճախ չունեն, ինչը հողագործության զարգացման վրա ազդող հիմնական գործոններից է: Հասանելի վարկային միջոցները ձեռք են բերվում դժվարությամբ, իսկ համեմատաբար բարձր տոկոսադրույքները հաճախ վանում են մարդկանց այդ միջոցների՝ հողագործության մեջ ներդրում կատարելուց:

#### Կարտոֆիլի մշակում

Տնամերձերում հիմնականում կարտոֆիլ է աճեցվում, նաև՝ մոտ 60 հեկտար վարելահողերում: Հողերը հիմնականում անջրդի են, բերքատվությունը տատանվում է 15 – 20 տոննա / հեկտար միջակայքում: Կարտոֆիլը վաճառում են, կերակրում անասուններին, ինչպես նաև փոխանակում այլ ապրանքների հետ՝ մրգեր, բանջարեղեն և այլն: Ստորև ներկայացված է մեկ հեկտար կարտոֆիլի աճեցման շահութաբերությունը:

	Կարտոֆիլ
1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ	15 000
Իրացում	12 000
1 կգ-ի միջին մեծածախ գինը (2014թ)	200
1 հա-ից ստացված եկամուտը ('1'x'2')	2 400 000
1 հա-ի վրա կատարված ծախսերը	950000
Շահույթ	1 450 000

Չնայած բերքատվությամբ կարտոֆիլագործությունը զիջում է Հայաստանի առաջատար համայնքներին, սակայն այն մոտ է հանրապետության միջին ցուցանիշին և կարող է ապահովել բավարար եկամուտ հողագործությամբ զբաղվող տնտեսությունների համար:

## Հացահատիկի աճեցում

Ցորենի և գարու աճեցումը համայնքներում հողագործության ավանդական ճյուղերից է: Այն մրցունակ է հանրապետության մասշտաբով: Աշնանացան ցորենի 1 հա միջին բերքատվությունը կազմում է 2.5 – 3 տ., ինչը 500 – 1000 կգ-ով բարձր է հանրապետության միջին ցուցանիշից:

Ստորև ներկայացված է ցորենի մեկ հեկտարի հաշվարկով շահութաբերությունը:

	Ցորեն
1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ	2700
1 կգ-ի միջին մեծածախ գինը (2014թ)	160
1 հա-ից ստացված եկամուտը ('1'x'2')	432 000
1 հա-ի վրա կատարված ծախսերը	150 000
Շահույթ	282 000

Ցորենը հիմնականում կերակրում են անասուններին: Համայնքներում գործում են կերադաշնակներ, որոնք ապահովում են որակյալ աղացում՝ 1 կգ-ը 10 դրամով:

Արտադրում են նաև սեփական օգտագործման համար այլուր:

## Այլ մշակաբույսերի աճեցում

Համայնքներում աճեցնում են տարբեր բանջարեղեններ, հիմնականում տնամերձերում՝ սեփական կարիքների համար: Մարդիկ վարելահողերը պատրաստում են անասնակերի աճեցման համար, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ անասնապահության զարգացման վրա:

Ցանովի խոտհարքի բարձր բերքատվության և կերամիավորի բարձր մակարդակի շնորհիվ ևս հնարավոր է բարձրացնել կաթնատվության մակարդակը:



**Բնական և ցանովի կերահանդակների համեմատական ցուցանիշներ**

Կերի տեսակը	Բերքատվությունը (g/հա)	Ընդամենը կերամիավոր(g)	Կերի ծախսը 1 g կաթի հաշվարկով (g/կ.մ.)	Կաթ (g)	Միս (կգ)
Առվույտի խոտ	75	39	1.1	35.45	410
Կորնգանի խոտ	65	35	1.1	31.8	368
Վարսակի խոտ	40	19.2	1.1	17.45	202
Բնական խոտ	18	8.1	1.1	8	100

---

**Հողագործության զարգացմանն ուղղված նախաձեռնություններ**

---

- Գյուղտեխնիկայի ձեռքբերման աջակցություն (թրթուրավոր և անիվավոր տրակտորներ, կից սաքավորումներ):
- Որակյալ սերմերի ձեռք բերման աջակցություն:
- Գարնանը կարճաժամկետ ֆինանսական աջակցություն՝ հողագործության ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով:

---


## Տնտեսության այլ ճյուղեր

---

Համայնքներում գործում են քարի, փայտի արտադրամասեր, որտեղ արտադրվող արտադրանքը իրացվում է ՀՀ ամբողջ տարածքում:

Գործում է գորգագործարան, որի զարգացումը կարող է արմատական ազդեցություն ունենալ համայնքներում արտադրվող բրդի վերամշակման համար: Այս պահին գորգի արտադրության համար անհրաժեշտ հումքը ներկրվում է Լճաշենից և Գավառից:

Գորգագործության զարգացմանը խթանում է նաև որակյալ մասնագետների առկայությունը. Արծվաշեն համայնքը հայտնի է եղել գորգագործությամբ, 1992 թվականին, երբ Ադրբեջանի կողմից Արծվաշենի տարածքը օկուպացվեց, բնակիչները տեղափոխվեցին Ճամբարակ՝ իրենց հետ համայնք բերելով նաև հայկական գորգագործության փորձը և հմտությունները:



Գործում են նաև հացի և հրուշակեղենի արտադրության արտադրամասեր, սպասարկման կետեր՝ վարսավիրանոցներ, սրահներ, ավտոտեխսպասարկում, երկու գազալցակայան և մոտ երկու տասնյակ առևտրի կետ:

Բոլոր ոլորտներում առկա է գործարարների կողմից մատչելի վարկի և ձեռնարկատիրական գործունեության հմտությունների զարգացման պահանջ:

Շնորհակալություն ենք հայտնում համայնքների ղեկավարներին և տեղական թիմի անդամներին, ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

